

դիշ. 174), որ բնականապէս առանձին պնակ մը կամ լաւ եւս պնակներ կը կազմէին կոչնոց մէջ, եփուելով զանազան կերպով, ինչպէս կրնայ զուշակուիլ «ուղղովք» յոգնականէն. թէ եւ այդ ձեւը կրնայ նաեւ հետեւանք լինել զուարակաց զանազանութեան:

3. Կերակրոց երկրորդ գլխաւոր տեսակը կը յօրինէին քոչնեղէնք: Ազատորդւոց սիրական զբօսանքն էր որսալ զանոնք, որոցմէ կը յիշուին՝ կաքաւուց ու սալամբաց երամներ, անուշահամ վայրի ագարներ, ջրասէր փորը, թանձրն ու սագը, եւ ուրիշ «անհամար ցամաքայնոցն եւ ջրայնոցն ջոկք թոչնոցն», զորս ըստ բախտին կը բերէին «ի յաճումն ընթրեացն ուրախութեան» (Փրպ. 26-7): Ասոնց ալ հոչակաւոր վայրերն էին Այրարատ (անդ) եւ Կարին (Խոր. 256):

4. Երրորդ կերակուրն էին ձկնեղէնք: Մեր տեսանք ասոնց առատութիւնն Հայաստանի ջրերուն մէջ (աստ, 113): Մեր նախարարք ձկնորսութեան մարմաջը չունէին. զանդազ եւ անհրապոյր զբօսանք մ'էր այդ. բայց կը սիրէին ջրայիններն ալ, եւ որսալ կու տային շինականաց: Բաց աստի՛ երբ իրենք երէնեբով ծանրաբեռնած կը դառնային, ձկնորսաց ման-